


ՏՆՈՐԷՆ-ՆՄԲԱԳԻՐ
ՅԱՐՈՒԹԻՒՆ ԱՆՓԻԱՐ

Նամակ կամ որ եւ է գրութիւն
պէտք է ուղղել առ

ԽՈՐԱԳՐՈՒԹԻՒՆ ՓԱՐՈՍ ԼԵՐՈՒՐԻ
Փագար Մուրուր, ԳԱԶԻՐԷ

Direction du journal PAROS
Bazar Mourour, CAIRE Egypte



Լ Ր Ա Փ Ի Ր

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԶՈՐԵՔՇԱՐԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Եզրագրութիւն համար տրեւն. ողջ դի. 80
» » վեցամսեայ » 50
Օսար երկիրներ տարեկան ֆրանկ 25
» » վեցամսեայ » 14
Թղթատարի ծախսը խմբագրութեան վրայ է:

Խմբագրութեան ուղղութեամբ նա-
մակ կամ այլ գրութիւն եւ չի տրուիր:

ՄԵՐ ԴՐԱՄԱՏԵՐՆԵՐՈՒՆ

Ժողովուրդին աղքատ, անգործ կամ
գաղթական մասը պէտք է ուղղութեամբ
քննադատուի մեր մէջ. քիչ մըն ալ դրամա-
տէրներուն կողմը ուշադրութիւն դարձունք
որոնք մեծ բան մը չեն ընել անոնց վիճակի
բարւոյն համար: Առիթներ կան որոնցմէ
կրնան օգտուիլ իրենք ու միեւնոյն ատեն օ-
գուտ քաղել ալ բազմութիւն հայերու՝ աշխա-
տութիւն հայթայթելով անոնց. այս կերպով
աւելի իրական ծառայութիւն մը մատուցած
պիտի ըլլան քան թէ տարին քանի մը անգամ
մասնակցելով հանգանակութեան մը կամ մէկ
երկու հազի յանձնարարելով պաշտօնի համար:
Խօսքերնիս եղիպտոսի հարուստներուն դէ-
մատէրներուն վրայ մասնաւորելով, կը կար-
ծենք թէ Սուտանի ճամբուն հետզհետէ բաց-
ուիլը, երկաթուղիներուն արագ շինութիւնը,
և այդ մեծատարած ու հարուստ երկրին ե-
ղիպտոսի հետ ուղղակի հաղորդակցութեան
գրուիլը՝ մեծ ասպարէզ պիտի բանայ վաճա-
ռականութեան ու արհեստներու առջեւ: Ինչ
չստ ծանօթութիւն ունեցողը կամ ունենալ
ուզողը դիւրաւ գաղափար կը կազմէ թէ ինչ
տեսակ ապրանքներու, բերքերու և նիւթերու
փոխադարձ առեւտուր կրնայ ըլլալ եղիպտոսի
և Սուտանի միջեւ. շատ չանցած պիտի իմա-
նանք Խարթումի գրաւումն ալ, ինչպէս կարճ
միջոցի մէջ առնուեցան Ապու Համէս և Պէր-
պէր: Անգլիական գաղութական բանակին յառաջ-
խաղացութիւնը աւեր ու կործանում չի թու-
ղուր սակայն իր հողին. ընդհակառակը, ան-
միջական կերպով կը ձեռնարկուի ամայի հո-
գերը շէնցելու, դիւղերը բազմացնելու և
քաղաքները բարեկարգելու. բանակին սպա-
ռուսներէն զատ, որոնց հայթայթումը իրաւ
է թէ հանգիստը չի արուիր, նորըստաց
գաւառներուն ընկերները մեծամեծ պէտքեր
ունին և դրամը ձեռքերնին կը սպասեն. կեր-
պով մը, կիսավայրենի ժողովուրդ մըն է որ
քաղաքակրթութեան առաջին բարիքները պի-
տի վայելէ ու հետաքրքրութիւնով խառն տենչ
մը կը զգայ քաղքենիին պէս ուտելու, խմելու,
ծխելու, հագուելու. հազարամէկ առարկայի
կարեւորութիւն տալ կը սկսի. ու՛ր առաջ ան-
ցաւ ու կարկառեց զանոնք իրեն, շահաբեր
ձեռնարկութեան մը հիմը դրած կըլլայ:

Ինչո՞ւ չօգտուիլ այս առիթէն:

Այս աղբըրը գրած ատենինս, թերեւս
Եւրոպայի զանազան կողմերը, մասնաւոր-
ապէս մէջ, ընկերակցութիւններ կազմուե-
լու վրայ են՝ այս կամ այն շահագործումը
ստանձնելու համար գէշի Սուտան: Փորձ մը
կրնան ընել եղիպտոսի գրամատէր հայերն
ալ, որոնք տեղական հանգամանքներն ու պայ-
մանները մօտէն գիտնալու առաւելութիւնը
ունին. իւրաքանչիւրը իր գրամագլուխէն շատ
փոքր մաս մը միայն տրամադրել իսկ եթէ
ուզէ, ամբողջութիւնը կը կազմէ կարեւոր գու-
մար մը, — վասն զի անհատական ձեռնարկու-
թիւններու չէ որ կ'ակնարկենք, այլ հաւա-
քական գործի մը, շահակցական ընկերու-
թեան մը: Թէ՛ իրենք կը շահին և թէ՛ շատ
մը անգործ մարդիկ, որոնք կը մնան այստեղ
չուարած ու անտոյգ, աշխատութիւն կը
գտնեն ու հացերնին կը ճարեն. այս ձեռ-
տեսանք բաւական թուով գաղթականներ ու-
րոնք պատրաստ էին մինչեւ Սուտան երթա-
լու, բայց գործ չի կար և մեծ մասին դի-
մաւններն ապարդիւն մնացին: Թո՛ղ կազմուի
cooperative ընկերութիւն մը, լաւ հիմքերու
վրայ, և մենք ապահով ենք որ կը յաջողի:
Մօտաւոր ապագայի մը մէջ անհազին միջոցով
պիտի սկսի այն կողմեր. հեռատեսները, ա-
ռաջ անցնողները ամենէն աւելի նպաստաւոր-
ուածները պիտի ըլլան:

ԵՍ ԱՆ ԶՈՋ ՄԸՆ ԵՄ

Յորտնիսք Ստրէյքի յօդուածը, ամուսնութեան
վրայ, որ իրեն առաջնորդող «Փարոս»-ի մէջ թարգ-
մանուած էր, խորին ուշադրութեամբ կարդացի:
Իր թէ իմ վրաս գրուած ըլլաւ: Զէք զարմանա-
րանքով եթէ ըսեմ որ ես ալ նախապաշարովի գոհ
մըն եմ: Եթէ այդ նախապաշարովի չըլլար, որ
մէյակէ անցողիկ արգելքներ կը յարուցանէ ամուս-
նութեան դէմ, այսօր ես ալ ամուսնացած՝ և փա-
խանակ նախապաշարովի գոհ մը չըլլալով՝ ամուսնու-
թեան գոհ մը եղած կըլլայի:
Տասնըութը տարեկան հասակէս ի վեր հետա-
մուտ եղայ ամուսնանալու, ոչ այնչափ իմովանն
մարդավարութեան գարման մը ընելու համար,
որչափ ուրիշ զգացումներէ զրդուած (այս, յուն
կրտսէ, «ուրիշ զգացումներէ զրդուած», նոյն իսկ
կրնայի ըսել «խիստանուած», եթէ ուրիշ նախապա-
շարովի մը, պատշաճութիւնը, թեւէ՛ն չբաշխէ): Այն
ատեն գեւա որ և է խորհրդայնութիւն ստիպած չըլլալով՝
ապրուստի միջոց մը չունէի. այս պարագան զենք
մը եղաւ նախապաշարովի ձեռքը՝ գործը արեւել
համար: Քանի մը տարի ետքը, իրեն սկսեալ խա-
րերայ մը, քիչ մը ստակ վատտիկ սկսայ: Անմի-
ջապէս աղջկան մը ձեռքը խնդրեցի:

— Հայ մը ճարեալ կարողութիւն ունիմ, ըսի
համեստութեամբ, և կրնամ կին ապրեցնել:
Նախապաշարովի որ աղջկան հօր կերպարանքով
ներկայացած էր ինձ՝ պատասխանեց:
— Տղաս, ո՛չ միայն հացիւ կեցցի, մարդ...:
— Գիտեմ, «Այլ բանիւ հետեմ», բայց, աւել-
ցուցի, տունը Աւետարան մըն ալ ունիմ:
Նախապաշարովի գիտել տուաւ թէ ո՛չ իսկ
Տիրոջը բանը բաւական էր կին մը պահելու համար:
Տխուր, բայց ո՛չ ընկճած, վերադարձայ և
միաբն զրի խորհրդայնութեան ճիշդ տառով տանիլ:
Քանի մը տարի ետքը եւրոպայի աղջկան մը
հանդիպեցայ:
Արեւի գայն, սիրեց պիտի (կարճ բայց ազդու
չէ՞ այս բացատրութիւնը):
Հաղիւ թէ ամուսնութեան խաղը մէջտեղ դրինք,
նախապաշարովի Հասարակայ կարծիքի պատմուածան
մը հազած՝ հարկաւորութեան հրէջի մը կերպու-
րանքով՝ ներկայացաւ այս անգամ՝ և սկսաւ պոռալ
կանչել:
— Աս ի՞նչ է, ի՞նչ խաղատախտութիւն է, միթէ
հայ աղջկները հատե՞ր են, չե՞ն տանար:
Միւս կողմէն ալ աղջկան կը պոռար:
— Հայ երիտասարդի՞ մը միայն, չերթա՞ն եր-
կիրդ, չկարդա՞ն:
Տեսայ որ նախապաշարովի եսեքսիզուքեան
սկսաւ, ուստի խնդրեմ անոց տեղը կապելի:
Ժամանակ մը ետքը պարագաներու բերմանը
ինքզինքս Աթէնք գտայ: Հոն յոյն աղջիկ մը սիրտս
գողցաւ:
Աղջկան անունն էր Գալիթի, Գալիթի որ
իրեն ստորագրէ կը լեւալի, գուրջութիւնը տեղի ու-
նեցաւ Արիստոքլիսի մօտերը, Արիստոքլիսի դէմ,
Պիլիքի լուրին վրայ, ճիշդ այն մարգարէտին մէջ
ուր Արիստոքլիսի հետ կը ստորագրէ հոգւոյ ան-
մահութեան և ուրիշ օրուան խնդիրներու վրայ խօ-
սակցելով: Իրիկուն էր և արեւը կը խոնարհէր
Հիւսիս լեւոտն ետեւ, իր յետին ճառագայթնե-
րը սկսեալով Աթինա Նիքէի և Թիւստի տաճար-
ներուն վրայ: Բայց այս մանրամասնութիւնները կը
յիշեմ իրեն «մեղմայուցիչ գէշը յոյնացանց», թէ՛
ինձի և թէ՛ աղջկան համար: Բնական է որ այդ
գողութեան համար ստորկանապետ Պ. Պարիսթու-
րիսի չղիկեցի, այլ աղջկան մօրը՝ Գալիթիի ձեռքը
ուղեւոր համար: Երբ ձեռքը ուղեւոր կըսեմ, կը հա-
կնաք անշուշտ թէ միաբն այն չէր որ ձեռքը սղու-
ցով մը կարէին ու ինձի տային): Մայրը հաւանեցաւ
և քանի մը օր ետքը աղջկան հետ Արիստոքլիսի
գողութեմ, Այոս Երիկիոսի մենաստանը գացինք և
հոնիկ Արիստոքլիսի տաճարի մնացորդներուն վրայ
ուխտեցինք յաւիտենական սէր: Մինչեւ հոս նա-
խապաշարովի իր քիթը չէր ցուցուցած՝ մանաւանդ
որ աղջիկը հայր չունէր որպէսզի անոր կերպարան-
քովը ներկայանար. իսկ եթէ նորէն իրեն Հասարա-
կայ կարծիք գէժս ելլէր, միաբն գրած էի բայց ի
բայ վառեմ:
Աթէնքի մէջ չէի վախճար այդ հրէջն:
Ինձի համար նախապաշարովի մեծած էր և
ես ուրախ էի ինչպէս Յիսուս Ղապարոսի մահաւոր
Սաղայն ուրախութիւնը երկար չտեսէր, ինչպէս
Երկար չէր տեսած Ղապարոսի մահը: Զեմ գիտեմ
ո՛վ ըսած էր նախապաշարովի «Արի», ե՛ւ յարտաքսոյ:

բայց բանն այն է որ երբեք չորս օր ետքը եկաւ զիս զտաւ՝ Յոյն քահանայի մը կերպարանքով, խաչոր տակաւ մը շաղկապ :

Անորոշապէս գիտէի որ Գալիլայէի ազգականներուն մէջ բաճանայ մը կար եւ երբ տեսայ զինքը ենթադրեցի թէ՛ արժանաւոր փառնակաւորութեամբ մը ինծի տակաւ մը Աստիճակէն զինի նուէր կը բերէր :

Սխալ ենթադրութիւն : Վրիպական տրամաբանութիւն : . . .

Նախապաշարութեամբ բաճաններու բառով բացատրեց խնդիրը :

—Մինչեւ որ սա տակաւին մէջ չտեսնուի, աղջիկ չի կայ բեղի համար :

Երեւոյցեցէք վիճակ : Ես որ գտաւորաւ թափառեցողութեամբ լեցուն ամուսնութիւն մը կնքել կերպէի, ես որ ամբողջ հայ պառնաստի մը հիւստի մը փրօս հրաւիրելու կը պատրաստուէի(1), յանկարծ տեսայ որ այդ տակաւնութեան արարողութեամբ փառնակ հիւստի, ծագրի ստարկայ մը պիտի ըլլայի ամենուն համար :

Բոլոր աւելնալ, բոլոր խանդավառութիւնն անհետացան այդ տակաւին առջեւ : Համերայի խիստակներէն կարծես Մեթաքսասի բոնեարը յաջորդեց :

Հետեւեալ օրը նաւ մտայ եւ ինքզինքս Եգիպտոս նետեցի :

Քաղաքակրթութեան կեդրոններէն հեռու, գաւառի մը մէջ, Նեղոսի մէկ ճիւղին վրայ հաստատեցի բնակութիւնս, ուր կը յաւայի հանգարտի կեանք մը վարէի՝ իրեն նոր Գիտելեալիստ՝ վայրի հազար մշակելով : Որոշած էի բացարձակապէս հեռու փախչիլ կնոջական փորձութիւններէ, Բայց, աւագ, խորհուրդ մարդկան՝ կամք . . . Ստանայի :

Երկու ամիս ետքը խենթի մը պէս սիրահարած էի սեւամորթ Սուտանուհիի մը, գուցէ արդիւնք Բիւն Լօթիի գիրքերուն չափազանց ընթերցման : Յայտնի է որ սիրահարութենէն ամուսնութիւն քայլ մը միայն կայ, ինչպէս Կապիտոլին Տարպեան ժայռը : Հետաքրքիր էի տեսնելու թէ ի՞նչ զիրք պիտի բռնէր նախապաշարութեամբ այս անգամ : Չուշացաւ գարնաներէն գիտակցութեան երեւոյթով :

Ներսիսիէն ձայն մը լսեցի որ կըսէր.

—Խարտեաները, թուրերը, չափաւորապէս կը բաժնուի և սեւամորթի մը հետ ամուսնանալ, ի՞նչ յիմարութիւն, ի՞նչ ճաշակի խանգարում :

Այդ ներքին ձայնին պատասխանեցի.

—Ողբոսն որ խառնուածի համար և հազար հատ կին ունէր, սիրահարեցաւ Սարա Թաղաւիկին որ սեւամորթ մըն էր : Եւ յետոյ, պարոն նախապաշարութեամբ, լուս Գիտելի որ սեւամորթ կինը ուրիշ բան չէ, այլ թախ կին մը որ անկեղծութիւն և հաստատութիւն ունեցած է իր ստարկելին մինչեւ ծայրը առաջ երթալու, և ես կը սիրեմ անկեղծութիւնը հաստատութեան հետ, ինչպէս տապալած ձուկը չի մը գինիին հետ :

Նախապաշարութեամբ քաղցեցաւ ինձ՝ «գիտցածիդ պէս լիքն» ըսելով : Հետեւեալ օրը տակաւին նոր կերպարանքով մը ներկայացաւ. — «Ամուսնայի որ սեւամորթին հետ, միայն թէ թո՛ղ տուր որ տառ» . . .

Եւ գրաւանէի վերաբաժանում գործի մը, սխալքի մը հանց :

Հասկցայ թէ ի՞նչ բան կուզէր և վստահ եմ որ գուցէ ալ հասկցար, եթէ բնութիւնը ձեզ չէ օժտած թանձր ապուշութեամբ մը :

Այդ, իմ ամբողջութեանս պահպանման այնչափ նախանձախնդիր եմ, որչափ եւրոպական մեծ պետութիւնները Տոմարտանի ամբողջութեան պահպանման : Աստի նորէն տեղի տուի :

ԺԻՐԱՅԻ

Պ Ա Ր Ո Ս Կ Ա Հ Ա Յ Ե Ր Ը

Դուրեթէ կը գրեն Մշակին թէ պարսիկ պաշտօնեայնէր՝ հայերու տունները խուզարկելու փորձեր սկսած են ընել, կասկածելի անձեր և թուրքեր փնտրելու պատրուակով թէ և ոչ մին գտեր են և ոչ միւսը : Թշուալկեղ թուրք կառավարութեան թեւադրութիւններուն կը վերադարձ պարսիկ կառավարութեան համար նորօրինակ եղող այսպիսի ընթացք մը հայերուն նկատմամբ :

(1) Խօսքը մեքենիս, այս ամուսնութեամբ մա. Գաւառի կը յաւայի Արեւիկ Զօրանեանի Գաւառի գրգռել, որուն հետ Բեռլինական խնդրի մը առ. քիւ աւուած են ժամանակէ մը ի վեր :

Ա Յ Ժ Մ Ե Ո Ւ Թ Ի Ի Ն

Մտնողի շուրհ կը հասնին Պոլիսահայէն, ուր ապաստանած հայ գաղթականներուն հանգիստը խոյնիւրդ փորձեր կը շարունակուին : Կ. Պոլսոյ վերջին դէպքին առիթով պաշտօնական շրջանակներուն մէջ համոզում գոյացած էր թէ յեղափոխական մասնախումբի մը կեդրոնն է Վառնա եւ այս մտքով հեռագրեր ուղղորւած էին եւրոպական քերթերուն, երբ մի եւ ինչն աւելնալ պոլիսահայ իշխանապետութեան ուշադրութիւնը կը հրահրուէր Դրան կողմէ : Զաւապարեցիկ օրը օրին արձագանգ տալ այդ գրոյցներուն, յուսալով որ կարեւորութենէ զուրկ եւ անհետեւանք կը մնան : Դժբաղդաբար՝ հակառակը կը պատահէ : Եգիպտոսի Մարտիէն քերթերն իրենց երեկի քունով հետեւեալն արտաստած էին եւրոպական վերջին Սուրհանդակէն :

Ռումանական Դոնաթանաւ լրագիրը կը գանգատի Տօլլուճայի ու Պուլկարիոյ միջեւ գտնուած սահմանագծին վրայ ընտելող պուլկար ժողովուրդին ընթացքէն որ ամեն կարելի եղած միջոցներով կը դիւրացնէ եղբւ հայ փախստականներու ռումանական հողը մանելը :

Միւս կողմէ, կը ծանուցուի թէ Դուռը իմանալով որ շատ մը հայեր, Կ. Պոլսոյ վերջին փորձերէն ետք, Պուլկարիա ապաստանած են, անոնց արտաքսումը պահանջեց Սաֆիայի կառավարութեան : Ի պատասխանի, այս վերջինը հաղորդեց Դրան թէ այն վայրկեանէն ուր այդ Հայեր ապաստան վնասուելու եկած են պուլկարական հողին վրայ, ինք չի կրնար արտաքսել զանոնք : Բայց թէ, իշխանապետութեան ամեն կողմը, տեղական իշխանութիւնը հրաման տալով են մօտէն հսկել այդ Հայերու արարքներուն վրայ : Պուլկար կառավարութիւնը կատարելապէս կապահովէ Դուռը՝ այդ փախստականներու ապագայ վարմունքի մասին : Եթէ ատենք փորձեն Թուրքիոյ դէմ դաւադրել, անմիջապէս պիտի արտաքսուին :

Թուրք թերթիւրը կը ծանուցանեն սակայն թէ շատ մը հայեր արտաքսուած են պուլկարական հողէն և թէ հայ յեղափոխական թերթ մը որ Վառնայի մէջ կը հրատարակուէր՝ խափանուել է պուլկար կառավարութեան հրամանով :

Այս տեղեկութեանց մէջ եթէ մխիթարական կէտ մը կայ՝ այն ալ պոլիսահայ կառավարութեան վեհանաճ պատասխանն է : Իսկ հայ քերթի մը խափանումը այդ ազատ երկրին մէջ, ու հայերու արտաքսումը այդ հիւրընկալ հողէն, քորֆ մամուլին կողմէ հրահարակուած շուրհ ըլլալով, վերապահութեամբ կը հաղորդենք զանոնք, մաղքելով որ անհիմն եղած ըլլան : Ամեն պատգալի մէջ, վստահ ենք թէ մեր պոլիսահայ ընկերակցութեան զորս կերպով մը կերպարանէ իշխանապետութիւնը՝ իրոյն արժանի պիտի հանդիսանան այդ վստահութեան, փարսեղով այն կասկած զոր ծանուցենք կողմի իրենց վրայ : Դուռն փորձ մըն էր այս ալ, այն բոլոր երեւակայնի ու աներեւակայնի փորձերուն ու փորձանքներուն պէս որոնք կը կուտակուին այս միջոցին՝ աշխարհի զանազան կողմերն ապաստանած դժբաղդ հայ գաղթականներու գլխուն :

ԴԱՏԱՊԱՐՏԵԱԼՆԵՐԸ ԵՒ ԲԱՆՏԱՐԿԵԱԼՆԵՐԸ

Ի՞նչ պիտի ըլլան մահուան դատաւարատուած ութ հայ երիտասարդները :

Ոչ որ որոշ գիտակցութիւն ունի տակաւին, բայց ամեն հայու սիրտ կը բարակէ անձ. կուլթեմա, թէ մի գուցէ կախաղանը իր մահաառ դերը կատարէ Պուլկար մէջ : Օրմանեան Պարթաբէն, որ Օրմանիէ պատուանշանով տկայեւրական մեծարանքներով պատուեցաւ դեռ վերջերս, անշուշտ իր ազգեցութիւնն ի դորձ պիտի դնէ՝ մեղմացունել տալու համար Եղեռնագատ ատենին ծայրայեղ վճիռը և այդ երիտասարդներուն կեանքը փրկելու պիտի աշխատի :

Միւս կողմէ, դերմանական Ֆրանկօրթեր Զայրունի թերթը կիմանայ թէ Սուլթանը պատրաստ է մահուան դատաւարատուած հայերուն ներում չորհել, եթէ Ֆրանսայի և Անգլիոյ դեսպանները ետ կենան պահանջել որ Թօքաթի ջարդին իբրեւ հեղինակ մահուան դատաւարատուած թուրքերուն պատիժը դորձադրուի :

* *

Տեղական իտալերէն թերթ մը, Կաժեթթա սի Գաիթո, շատ տխուր գոյներով կը նշուի կարգիտ հայ բանտարկեալներու վիճակը :

«Հայ յեղափոխականներու դժուր յայտարարութիւն մը հրատարակելով՝ գեապաններու ուշադրութիւնը կը հրահրէ այն անլուր չարչարաններու վրայ որոնց ենթակայ են հայ յեղափոխականները տաճկական բանտերու մէջ, օգոստոս 18ի դէպքէն ի վեր :

«Այդ առթիւ ձերբակալուածներու թիւը 750էն աւելի է :

«Բանտարկուածները խոստովանեցունելու կամ յայտնութիւններ ընելու հարկին մէջ դնելու համար՝ ամենէն սոսկալի տանջանքներու կենթարկեն այդ խեղճերը :

«Այն քանի մը ծերունի հայերը որոնք կըցան դիմանալ մտրակի հարուածներուն, կարմրեցած երկաթով ծեծուիլ սկսան : Երեք դառնալի հայաղիկներ տաք ջուրի մէջ խեղդամահ գտնուեցան : Աստիճանաբար տաքցող ջուրի մէջ մոցնել բանտարկեալները պատիժի տեսակ մըն է որ շատ կը գործածուի Պուլկար բանտերուն մէջ :

«Շատ մը դժբաղդ բանտարկեալներ իրենց յայտնութիւնները ընելէ վերջ՝ նորէն բանտ դրուեցան ուր շատերը մեռան անօթութենէ ու ծարաւէ :

«Երեք հարիւր կին և երկուարդ հայ բանտարկեալներ Արաբիոյ ներսերը արտաքսուեցան : Յայտարարութիւնը՝ Եւրոպական տեղութեանց միջամտութիւնը կը խնդրէ իրաց այս սոսկալի վիճակին վերջ մը դնելու համար :

Կաժեթթա սի Գաիթո ուրկէ կը թարգմանենք այս տողերը, իր կողմէ կաւեցնէ թէ Եւրոպա պիտի շարունակէ՝ անտարբեր մնալ այս արհաւիրքներու հանդէպ որոնք պարբերաբար կը գործուին տաճկայ կողմէ : Դիմանալ դէմքերը ատանել անշուն բանտերով զբաղելու ժամանակ չունին, կը յաւելու հեղեղական շեշտով մը մեր իտալացի պաշտօնակիցը :

ԽՐԱՏՆԵՐ ՈՐԴԻՈՅԱՆ

... ԵՐԲ ՈՐ ՈՒՆԵՆԱՄ

«Դու բեզ օգնէ որ Աստուծոյ աշխարհ օգնէ»
այս խորատու երգիչ մի մասնաւոր, որդեակի, ո՛վ զիտէ
կարեւոր է օրին մէջը... Թողտան կրկնուի:

* *

Կնիւն մը հաճելի ըլլալու համար մարդ եղիւր,
էրիկ մարդ ըլլալու բաւական չէ:

* *

Մէյ մը Աստուծոյ վստայիւր, երկուք ալ կնիւնէն:

* *

Այս խորատու զարմանքի սրահուն սիրոյ մէջ
բանաստեղծութիւն մի փնտռուի:

Հազիւ միտքը կը դնուի կնիւն մը հաւնիւր, նա
արդէն հաճուիլ կ'սկսի:

* *

Սկիզբն իմաստութեան՝ որը ազդեցիկ մը հետ ա-
մուսնանայ է... Գործնէ չես ունենար:

ՌԱՏԱՄԷՍ

ՕՐՈՒԱՆ ԼՈՒՐԵՐ

Թուրք թերթերը ծանուցել են թէ Սուլ-
թանը իր գահակալութեան տարեգարհին
առթիւ ներում շնորհելէ ետք այն բանտարկ-
եալներուն որոնք իրենց պատժին երկուերորդ-
մասը լրացուցած են —ինչպէս կըլլար սովորա-
բար ամեն տարի,— երկրորդ իրատէսով մը
հրամայել է ազատ արձակել քաղաքական
յանցանքի համար ամբաստանուած կամ դա-
տապարտուած բոլոր բանտարկեալները: Թուրք
թերթերը չէին զանազանած սակայն թէ
այս ներումէն պիտի կրնան օգտուիլ նաեւ
հայ բանտարկեալները: Բոյիթի Քօրէսքոն-
սէնն սա կարծիքը կը յայտնէ թէ ասիկայ
պարզապէս հնարք մըն է կարգ մը «ժէժ-
թիւրք»-եր սիրաշահելու համար, և կ'աւել-
ցունէ որ եթէ քաղաքական յանցանքներու
ընդհանուր ներում կ'ըստի՝ առանց մասնա-
ւորելու, Մուրատ պէյին անունը չի տալու
համար է:

—Կ. Պոլսէն, պաշտօնական աղբիւրէ,
կը հեռագրուի թէ՛ շրջած զրոյցներուն հա-
կառակ՝ Միջագետքի նախկին խմբագիրը իր ծու-
կեղերեայ բնակարանին մէջ կը գտնուի, Անա-
տօլու-Հիւսիս: Իսկ Թալիսկին թղթակիցը կը
պնդէ Մուրատ պէյի անհետացման վրայ, ա-
ռանց մեկնութիւն մը տալ կարենալու:

—Երէկուան Բոսկորէի մէջ կը կարդանք.
«Կ. Պոլսէն կը հաղորդեն սեպտ. 9 թուական-
նով թէ Պէրզամայի մէջ (Այսթընի նահանգ)
անգլիացիի մը պատկանող ագարակ մը կո-
ղպտուել է թուրք աւազակներու կողմէ:
Պահապանները, թէեւ իրենք ալ թուրք, ըս-
պաններ են: Կերեւայ թէ Պէրզամայի գալ-
մագամը կը պաշտպանէր աւազակները: Սըր
Փիլիք Բըրքի ազգու զինուորներ ըրած է Բ.
Դրան մօտ և յանձնարարել է իզմիրի անգ-
լիական հիւպատոսին՝ կուսակալէն պահանջել
չարագործներուն ձերբակալումը:»

—Կրէտէի վիճակը կը մնայ չիթ և անու-
րոշ: Կղզիին կառավարիչը Դրան կողմէ բո-
ղոքեր է միջազգային դատարանի մը հաւ-

տատման դէմ զոր Սուլթանին դերիշխանու-
թեան իրաւունքին բռնարարում մը կը նկատէ:
Քանի վարձ ծովակալը որ արձակուողով
Հուր գացած էր, ամսոյ 24ին Կրէտէ կը
վերադառնայ: Խաղաղական թերթի մը խմբ-
ագիրն հետ տեսնուելով, ծովակալը յայտա-
բարել է թէ բոլոր Կրէտէցիները ինքնօրինակ
թեան կողմ են և թէ կղզին Յունաստանի
միացնելու գաղափարէն հրաժարած են:

Հանեայի մէջ հետեւեալ միջադէպը պա-
տահեր է: Քանի մը հիւանդ թուրք զինուոր-
ներ որոնք Իշմիր երթալ կուգէին՝ չողենալին
չի հասնելով Հանեա կը վերադառնան: Մի-
ջազգային նաւատորմին հրամանատարը կար-
ծելով որ օսմ. զօրք ցամաք կը հանուին,
խումբ մը ծովային զինուորներ կեցուցեր է
քարափին վրայ. բայց իրողութիւնը շուտով
հասկցուել է:

Բոսկորէի յարգելի տէր և սնորհներ,
Պարոն Քիրիաքօրուլօ, գառն կորուստ մը ու-
նեցաւ իր սիրելի կնիւն մահուամբ:

Տիկին Քիրիաքօրուլօ որ տաժանելի հի-
ւանդութենէ մը ետքը հինգշաբթի օր հոգին
աւանդեց, իրեւել կին և իբրեւ մայր այնպի-
սի գեղեցիկ յատկութիւններ ունէր որ զինքը
պաշտելի ընել կուտար մինչև իսկ իր ընտա-
նեկան շրջանակէն դուրս:

Պ. Քիրիաքօրուլօյի բարեկամները և ծա-
նօթները կը մանեակցին այդ սուգին և Փա-
րոսի խմբագրութիւնը իր զգածուած վշտակ-
ցութեան արտայայտումը կը ներկայացնէ ան-
միսթար ամուսնոյն և բոլոր Քիրիաքօրուլօ
ընտանեացի:

ԸՆԹԵՐՅԱՍԻՐԱՅ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ԼՍԱՐԱՆ

Շաբաթ գիշեր 18 Սեպտեմբեր, ժամը 9ին

ՅԱՅՏԱԳԻՐ

Տեսոր Յ. Սէթեան պիտի խօսի Վերթի Զիւ-
կոյի Մովսէս աշխատանքներուն վրայ:

ՄԱՍՆ Ա.

Ա. Վահանգիստ (գաղանակ) Տ. Ա. ՍՈՆԹԻՆԻ
Բ. Առնախոսութիւն. Մասն Ա. Տ. Յ. ՍԵՐԵԱՆ
Գ. Կուսն, Ավի Մարիա (գաղանակ) Տ. Ս. ՍՈՆԹԻՆԻ
Ֆիլիթ) Տ. Ս. ՍՈՆԹԻՆԻ
ԵՒ ՃԱՄՃԵԱՆ

ՄԱՍՆ Բ.

Դ. Առնախոսութիւն. Մասն Բ. Տ. Յ. ՍԵՐԵԱՆ
Ե. Բարէ գ'ա գա ֆէնէք. Նրգ եւ
գաւեակ Տ. ՃԱՄՃԵԱՆ
Տ. Ս. ՍՈՆԹԻՆԻ
Ձ. Շիւպէր, Սերեւա (գաղանակ) Տ. Տ. ՍՈՆԹԻՆԻ
Ֆիլիթ) Տ. Տ. ՍՈՆԹԻՆԻ
ԵՒ ՃԱՄՃԵԱՆ
Ե. Ստեփանի, Քալիք
ՀԵՂԻՆՍԱԿԸ

ՏԵՂԱԿԱՆ

Ժամանակէ մը ի վեր ինչպէս ժողո-
վրդեան նոյնպէս կառավարական շրջա-
նակներու մէջ մտահոգութիւն կը պատ-
ճառէր արարներու հակաբոլորակական տե-
սակ մը ոգեւորութիւնը որ վերջերս Եգիպտոս-
ի քանի մը քաղաքներու մէջ անախորժ կեր-
պով ի յայտ եկաւ, մանաւանդ Սուլթանին
գահակալութեան տարեգարհին առթիւ:

Այդ միջադէպներուն առաջը առնելու
համար եգիպտական կառավարութեան և ան-
գլիական դրաւիչ բռնակին միջեւ համաձայ-
նութիւն գոյացած է անգլիացի զօրքեր զրկե-
լու այն քաղաքներուն մէջ ուր ասոնց պէտքը
զգուշ կը լլայ... յունական վերջին պատերազ-
մին ելքէն ի վեր:

Սկզբումն այդ որոշումը երկու կողմէն
ալ ընդունուած է և Լորտ Քրոմբրի գալուստն
կապառուի գործադրութեան գրուելու համար:
Հաւանական է որ հոկտեմբերի սկիզբը
կարելի ըլլայ այդ անգլիացի զինուորները զըր-
կել ի Չակադիկ, Թանթա, և Վերին ու Ստո-
րին Եգիպտոսի քանի մը գլխաւոր քաղաքները:

Ապահովութեան համար ձեռք առնուած
այս զգուշական զօրաւոր միջոց գահութիւն
պիտի պատճառէ այդ քաղաքներու բրիտան-
եայ բնակիչներուն:

Յաւանական չաբժու անգլիական զօրա-
գունդեր կը հասնին Եգիպտոս, յատկապէս
այս նպատակաւ:

ԳՈՐԾԱԴՈՒԼ

Աղեքսանդրիոյ մտաւճառները, հիշող մեքենա-
գործներու, հանքերու մէջ աշխատողներու և կա-
ռապաններու պէս, գործադու ընել սկսած են քանի
մը օրէ ի վեր:

Հետեւաբար Եգիպտոսի երկրորդ մարտադա-
րին մէջ ժողովուրդը միա չուսելու գաղափարաւորու-
մէ. մաղթենք որ միեւնոյն ըլլայ նաեւ մեր ընկե-
րութեան արձարանին միայուն յաճախորդներուն
համար:

Աղեքսանդրիոյ սպանդանոցը որ մինչեւ այժմ
Ռամիլի Զէթի կայարանին մօտ կը գտնուէր Մէքս
փոխադրուած ըլլալով՝ թաղապետութիւնը նոր առ-
կաչին մը շինած է, այստեղի Աս սփնդարանին
շինածին յար և նման, որով սպանդանոցի տարբը շատ
բարձրացած է. այս նորութիւնը մտաւճառնե-
րու գործին չէ եկած և քանի մը օր, ի վեր ոչ
կով մարթած ունին և ոչ ալ ոչխար. այնպէս որ
բազարը ատանց մի ձգած են:

Եւ որովհետեւ ժողովուրդ մը միայն հացիւ
չապրիր —ինչպէս անգլի յիշած է մեր նորավա-
ղապետակիցներէն մին— այլ և միս, խաղաղե-
տութիւնը գիշում ընելու հարկին մէջ գտնուած է
Մէքսի նոր սպանդանոցը գոցելով և շարունակելով
ըստ նախկին դրութեան տուրք գանձել մարթած
կենդանիներէն: Այսօրուրնէ սկսեալ մտաւճառները
սկսած են իրենց գործին:

Երանի թէ այս գործադուլին խորտակուած՝
Քլօթ պէյի գեղեցիկ (*) սեռին պատկանող մա-
վաճառներն ալ գործադուլ ընէին ի մեծ գոհունա-
կութիւն քաղաքին անբարոյականութեան դէմ թու-
մը դնել ուզողներուն:

ԱՅՍ ՕՐՈՒԱՆ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ԼՈՆՏՈՆ, 18 Սեպտ. — Հաշտութեան պայման
նաղրը, որ վերջապէս ընդունուեցաւ, կը տրա-
մադրէ որ Յունաստանի երեւոտքին վրայ քոն-
դուլի հաստատուելէն ամիս մը վերջը՝ Թեսալիան
պիտի պարպուի:

ԿԻՆԵՐՈՒ ՄԱՍԸ

Աշտանամուտի այս միջոցին բնական է որ շատ
մը կնիւն, ամենը չըսելու համար, կը մտածեն թէ
ինչ պիտի ըլլայ վաղուան մօտան:

Ոչ փոքր Ասիոյ բարենորոգումները ոչ Յունա-
կան խնդիրը և ոչ ալ ցորենի բարձրացումը այն-
քան կարեւորութիւն ունի իրենց համար որքան կեր-
պաններու գոյնը, թեւեւ ձեւը և ձեռնոցներու
տեսակը զորս ստիպեալ պիտի ըլլան կրելու քանի
մը շարաթէն:

Որքան որ դեռ վերջին բառը արտասանուած չէ

Բարիկեան մեծ գերմանականներու կողմէ, սակայն հիմնական կրօններ ապահովելու իմ այս աշխատանքը զարգեալ պիտի տրուի genre tailleur չըջաղուեալ ներք, որոնք արդարեալ պիտի բլան galonով և passementerieներով:

Անգլիական թիկնայրները սրածայր կամ բարձր քարտէսով մը երկայն կերպով շինուած պիտի ըլլան, ինչ որ շատ յարմար է այդ կարծ և անհաստատ եղանակին համար:

Բարձր օձիկները (engonçants) մօտա ըլլալի չպիտի գաղտնի աշխատեցնեն անհայտ թաւական ծառայութիւն կը մատուցանեն, հակառակ շատերուն ստարթութեան իմ ատենը միջ մարդո՝ -կինները ըսել կուզեն— խեղդուելու փորձովին կեն թարկի:

Այդ բարձրին մօտիկ ընող չկայ, մօտան ապախէս կը պահանջէ և այս աշխարհիս վրայ մօտան միակ բանն է որուն անհնազանդ գանձով կարելի չէ:

Քանի մը օրէն մոխրագոյն, ճերմակ, սեւ և կամ պէժ պօսանքներ, այդ մետաքսէ օձերը, կիններու գեղեցիկ վզերուն պիտի փաթթուին:

Պօսան կանանց ամենէն գեղեցիկ զարդերէն մին է այդ փետուրէ վզնոցներու մէջ, երբ մանուսնող ճաշակատար արդուները մը կընկերանայ անոր, կինը անդիմադրելի հրապույր մը կատանայ երբ միեւնոյն ատեն այդ փետուրէ օձիքին մէջ ծայրուելու արհեստին ալ տեղեակ է քիչ շատ:

Դէմքին գոյնը մանուսնողային բան մը կը շահի պօսի մէջ և երբ կին մը իր գոյնները կը պահէ ամեն բանի կրնայ յաղթել, պայմանաւ որ այդ գոյնը վըրձին մը կամ սարունգի կտորի մը դարձը չըլլայ:

Երեկոյններու համար այս տարուան սեփօլքենը խիստ շատ . . . սեփօլք են. կերեւայ թէ ներուած սահմանը քիչ կուզայ կանանց այն մասին որ իրանէն վեր բան մը գոյ պահելու հարկին մէջ չի գտնուիր:

Ռեքլիներ ալ կան որոնց այս չափազանց սեփօլքին դարձերուն չի դար, tant pis pour eux.

Մօտան թէեւ կիններուն համար ստեղծուած է բայց էրիկ մարդիկ ալ ձայն ունին անոր մէջ և չափազանցութիւն մը երբէք չէ խորհեցուցած տգեղ սեռը երբ մանուսնող ինքզինը սեփօլքի վրայ է:

Ա Ձ Դ

Տիկին Սոֆիկ Ազգապետեան, մանկաբարձ, վկայեալ կայսերական վարժարանէն, այժմ բնակութիւնը Դաւիթ հաստատութեան ընկալով, պատիւ ունի ծանուցանել հայ հասարակութեան որ պատրաստ է իր խնամքները ալ իրեն պէժ ունեցողներուն:

Իր եղբարժականայն փորձառութիւնը եւ խրդնամիս աշխատութիւնը զինքն բալախա առաջնա կարգ մանկաբարձերու կարգը կանգնեն:

Դիմել Եւաքա, Չաւաթի փողոց թիւ 12: Եւ կուտարքի եւ հիմնադրի օրերը առաւօտուն կը գրանուի Սարգսեան դեղատանը ի Պէն-Էլ-Սուրէն:

Տ Պ Ա Ր Ա Ն

“ՓԱՐՈՍ” ԼՐԱԳՐԻ

Կ Ը Տ Պ Ա Գ Ր Ո Ւ Ի Ն

ԱՄԵՆ ԼԵՋՈՒԻ ՇՐՋԱՐԵՐԱԿԱՆ

ՄԱՀԱՉԻ, ՀՐԱԽԻՐԱԳԻՐ, ԱՅՅԱՔԱՐՏ

ՅԱՆԿԵՐ, ՏԵՂԵԿԱԳՐԵՐ

ՀԱՇՈՒԵՑՈՒՑԱԿ, ՆԱՄԱԿԱԳՐՈՒԻ

Տ Ո Մ Ս Ե Ր

Եզրագրողն որ և է քաղաքէ կամ գիւղէ եկած յանձնարարութիւնները ամենայն խնամք և փութով կը կատարուին:

ՎԱՅՐԿԵՆԱԿԱՆ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

Այցաբարձրն եւ տոմարն

Տպարանը բաց է ամեն օր բացի կիրակի եւ օգոստոսի, առաւօտեան ժամ 7-էն երեկոյեան ժամ 7:

Le Gérant: HENRY SAKAKINI

Տպագրութիւն ՓԱՐՈՍ լրագրի

ԴՐԱՄԱՏՈՒՆ ԱԼԷԲԱՆՏՐ Ժ. ԲԵՍՄԱԶՈՂԼՈՒ

Գ Ա Ն Ի Ր Է

Գնում և վաճառում արժեք ունեցողներու.— Կանխավճար արժեք ունեցողներու վրայ.— Կտան. ձեռք յաճախողներու հաշիւին համար գանձումներ ընել Եզրագրողի և արտասահմանի գլխավոր քաղաքներու մէջ.— Պայմանագրագրող արժեք ունեցողներու, օրինակով պայմաններով:

Աւելի մանրամասն տեղեկութեանց համար դիմել Պոլսի փողոց Եզրագրողի հասցեատեղան դէմ Բէսմազօղլու դրամատունը:

ՀՐԱՆՏ ԱՋԱՏԵԱՆ ԱՐԴԿՈՂ ԵՒ ԼՈՒԱՑԱՐԱՐ

Էօզպէքիէ, հայկական պանդոկին քովընտրի կամարակապ փողոցը բացած խանութին մէջ ամենէն զփութարահանները գոհացնելու եղանակաւ կ'արդուէ շապիկներ և այլն սովորական զիններով:

ԵԳԻՊՏԱԿԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻՔ

ԺԱՄԱՆԱԿԱՅԻՆ ԵՐԹԵԻԿՈՒԹԵԱՆՑ

Սկսեալ 1 Փետրուար 1897

ԳԱՀԻՐԷՆ ԱՂԵՔՍԱՆԳՐԻՈՅ ԳԻԾ

Կ Ա Յ Ո Ր Ա Ն Ք	Խառն 1,2,3 կգ.	Օմնիպ. 1,2,3 կգ.	Կէս ուղ. 1,2,3 կգ.	Օմնիպ. 1,2,3 կգ.	Էքսպրէս 1, 2 կգ.	Օմնիպ. 1,2,3 կգ.	Էքսպրէս 1, 2 կգ.	Օմնիպիւս 1 2 3 կարգ	
	առաւ.	առաւ.	առաւ.	առաւ.	առաւ.	երեկ.	երեկ.	երեկ.	երեկ.
Գահիրէ	մեկ. 4 45	—	7 —	8 15	9 30	3 30	4 45	7 15	11 —
Պէնհա	» 8 —	—	7 49	9 32	10 15	4 47	5 29	8 32	առաւ. 12 35
Թանթա	ժամ. 11 28	—	8 30	10 30	10 55	5 45	6 7	9 30	1 44
	մեկ. 11 48	6 —	8 34	11 15	11 —	6 26	6 11	—	1 54
Տամանհուր	» 3 10	7 34	9 41	12 49	11 58	7 59	7 7	—	3 51
	երեկոյ			երեկոյ					
Ազէ քաղաքի	ժամ. 6 25	9 15	10 45	2 30	1 —	9 40	8 7	—	5 50

ԱՂԵՔՍԱՆԳՐԻՈՅԻ ԳԱՀԻՐԷԻ ԳԻԾ

Կ Ա Յ Ո Ր Ա Ն Ք	Օմնիպ. 1,2,3 կգ.	Կէս ուղ. 1,2,3 կգ.	Օմնիպ. 1,2,3 կգ.	Էքսպրէս 1 2 կգ.	Խառն առաւ.	Օմնիպ. 1,2,3 կգ.	Էքսպրէս 1 2 կգ.	Օմնիպիւս 1 2 3 կարգ	
	առաւ.	առաւ.	առաւ.	առաւ.	առաւ.	երեկ.	երեկ.	երեկ.	երեկ.
Ազէ քաղաքի	մեկ. —	7 —	7 15	9 —	9 20	2 30	4 15	6 15	11 —
Տամանհուր	» —	8 6	8 58	10 2	12 14	4 13	5 15	8 6	առաւ. 1 9
	ժամ. —	9 12	10 28	11 —	2 39	5 43	6 10	9 40	2 56
Թանթա	մեկ. 6 15	9 16	11 20	11 5	2 49	6 30	6 14	—	3 6
			երեկ.						
Պէնհա	մեկ. 7 18	9 59	12 23	11 46	4 43	7 33	6 52	—	4 25
Գահիրէ	ժամ. 8 30	10 45	1 35	12 30	6 25	8 45	7 35	—	5 50

ԳԱՀԻՐԷ-ՍԻԷԶ

ՊԵՆՀԱՅԻ ԶԱՄԲԱՅ

ՍԻԷԶ-ԳԱՀԻՐԷ

ԿԱՅՄԱՐԱՆՔ			ԿԱՅՄԱՐԱՆՔ		
	ԱՌԱՌՕՏ	ԵՐԵԿՈՅ		ԱՌԱՌՕՏ	ԵՐԵԿՈՅ
Գահիրէ	մեկ. 11 40	7 —	Սիւէզ (քարափ)	մեկ. 9 50	—
Պէնհա	երեկոյ 12 28	7 48	» կայարան	» —	3 30
	մեկ. 12 33	7 53	Իսմաիլիա	» 1 20	7 5
Զակաղիկ	ժամ. 1 34	8 54	Զակաղիկ	ժամ. 3 7	8 53
	մեկ. 1 44	9 4		մեկ. 3 17	9 3
Իսմաիլիա	մեկ. 3 40	1 —	Պէնհա	ժամ. 4 13	9 47
Սիւէզ կայարան	ժամ. —	5 —		մեկ. 4 17	9 4
Տօք (քարափ)	ժամ. 6 55	—	Գահիրէ	ժամ. 5 5	10 35